ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N «ՇՀԱՊՁԲ-9/25-2»

ք. Երևան «06» «դեկտեմբերի» 2016թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետ Պ.Կ. Կարապետյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Գնորդ», մի կողմից և «ԷՍՁԵԹ ՖԱՐՄԱ» ՍՊԸ-ն՝ի դեմս ընկերության տնօրեն Ե.Սարգսյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ «Վաճառող», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ՝ Պայմանագիր/ սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (հավելված N 2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքներ /այսուհետ՝ Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար /հավելված N 3/:

2. ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1 Վաճառողն Ապրանքը մատակարարում է Գնորդին /Ստացողին/ Պայմանագրի N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և ժամկետներում:

2.2 Վաճառողը Ապրանքը հասցնում է Գնորդին /Ստացողին/՝ սույն պայմանագրով նշված հասցեով /ներով/:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են **10 օրից** ավելի.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա.

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի անհատույց փոխարինում Պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով.

3.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ Պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ ողջամիտ ծախսերը.

3.1.7 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայմանագիրը.

3.1.7.1 Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են **10 օրից** ավելի,

3.1.8 Ձևնել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

3.2 Գնորդը պարտավոր է՝

3.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականուն, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝

ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.2.5 Պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս վնասները:

3.3 Վաճառողն իրավունք ունի՝

3.3.1 Գնորդից /Ստացողից/ պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից /Ստացողից/ պահանջել վճարելու համապատասխան Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է Պայամագիրը:

3.3.4.1 Գնորդի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե քազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

3.3.5 Գնորդի /Ստացողի/ համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:

3.4 Վաճառողը պարտավոր է՝

3.4.1 Գնորդին /Ստացողին/ հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Պայմանագրի 2.2 կետին համապատասխան՝ Ապրանքը Գնորդին /Ստացողին/ մատակարարել վերջինիս հետնախապես համաձայնեցված ժամկետներում:

3.4.3 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 3.1.2 բ/ և 3.1.5 կետերին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

3.4.4 Գնորդին /Ստացողին/ հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.5 Գնորդին /Ստացողին/ հանձնել Պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի /Ստացողի/ պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

3.4.7 Հետ տանել Գնորդի /Ստացողի/ կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետկապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.9 Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.10 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրամասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

4. ԱՊՐԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրով Վաճառողի կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է՝ **26,513,056** (քսանվեց միլիոն հինգ հարյուր տասներեք հազար հիսունվեց) ՀՀ դրամ: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը: Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա, 15 բանկային օրվա ընթացքում՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով՝ հավելված N 3-ով, նախատեսված ամսում, /եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում/ բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն քավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2016թ. դեկտեմբերի 25-ը:

5. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

6. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

6.1 Վաճառողն Ապրանքը հանձնում է Գնորդին /Ստացողին/ Պայմանագրի N 2 հավելվածում նշված ծավալներով և ժամկետներում:

6.2 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ավարտի օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է ներկայացնում մատակարարված Ապրանքի մասին իր կողմից ստորագրված

հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (*Հավելված N 4*) և Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (*Հավելված N 4.1*):

6.3 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված Ապրանքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունն չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.4 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից հինգօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

6.5 Եթե Գնորդը Պայմանագրի 6.4 կետով սահմանված ժամկետում չի ընդունում Պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և Պայմանագրի 6.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.3 Պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

7.4 Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.5 Գնորդի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

9.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծել Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.2 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը: Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.3 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

9.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող Ապրանքի միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման: Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

9.5 Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև ապրանքի ամբողջ ծավալով մատակարարման ժամկետի ավարտն ընկած ժամանակահատվածի յուրաքանչյուր վեցերորդ ամիսը լրանալը Գնորդը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա սահմանված կարգով շրջանակային համաձայնագրերով կազմակերպում է տվյալ ապրանքի ձեռքբերման նոր ընթացակարգ: Եթե այդ ընթացակարգի արդյունքում սահմանված կարգով ձևավորված նվազագույն միավոր գինը որևէ ապրանքի մասով ցածր է Պայմանագրով սահմանված գնից, ապա այդ մասով Գնորդը մեկ աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին ներկայացնում է ապրանքը ձևավորված ցածր գնով մատակարարելու պահանջ և Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագրի նախագիծը: Եթե Վաճառողը երկու աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում և Գնորդին ներկայացնում Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագիրը, ապա այդ մասով Գնորդը ընտրված մասնակցի հետ կնքում է նոր պայմանագիր և դրա ուժի մեջ մտնելու ամսաթվին համապատասխան այդ մասով միակողմանիորեն լուծում է Պայմանագիրը՝ առանց Վաճառողի նկատմամբ Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցների կիրառման:

9.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը Պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

9.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

9.8 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Վաճառողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

9.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

9.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.11 Պայմանագիրը կազմված է 8 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 N 4 և N 4.1 հավելվածները համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

9.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9.13 Սույն պայմանագով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանումը՝ հանդիսանում ՀՀ ՀՈՒ ռազմաբժշկական վարչությունը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«ԷՍՁԵԹՍԱՐՄՍ» ՍՊԸ
ք. Երևան, Բարեկամության 5	ք. Երևան, Տիգրան Մեծի 63/23
ՀՀ ՊՆ ԱՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Կոնվերս բանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011144129	Հ/Հ 1930000521940100
ՀՎՀՀ 00867415	ՀՎՀՀ 00433863
ՀՀ պաշտպանության նախարարության ՆՏԱ դեպարտամենտի գլխավոր պետ	տնօրեն
Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ	Ե. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 1
N ԾՀԱՊՁԲ-9/25-2 պայմանագրի

ՀՀ ՊՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Հ/Հ	ԱՆՎԱՆՈՒՄ	ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐ
1.	Տուրբինային գլխիներ	Բոռեր ալմաստե գլխիկով տուրբինայինծայրակալի համար: Ալմաստե հատիկները համասեռ են և հավասարաչափ, խոշորությունը՝ 20-150մկ: Յուրաքանչյուր խմբաքանակ անցնում է կարծրության լազերային թեստավորում:
2.	Ատամնաբուժական ասեղներ 100 հատ (Յուրաքանչյուրից)	Ատամնաբուժական ասեղներ 30G-25mm, 27G-36mm, ախտահանված ռադիացիոն մեթոդով ISO 7885-2001, EN 556-1, ISO 11137, պատրաստված AISI 304 - 1.4301 պողպատից, կազմը՝ C ≤0,07, Si ≤1,00, Mn ≤2,00, N ≤0,11, Cr 17,5-19,5, Ni 8,0-10,5,
3.	Ֆայլեր K-files, H-fites (Յուրաքանչյուրից) N6	N10, N15, N20, N25, N30, N35 Արմատախողովակը մշակելու համար: Երկարությունը՝ 25մմ, 31մմ:
4.	Արմատալեցիչ N4	Արմատախողովակը լցոնելու համար: Երկարությունը՝ 25մմ, 29մմ: Տուփը պարունակում է 4 հատ արմատալցոնիչ: Կազմված է առանցքից և զսպանակից: Խիտզսպանակը անմիջապես սկսվում է առանցքից և կլանում պուլսացիոն շարժման ուժը՝ մեծացնելով դիմացկունությունը: Լիցքանյութը բաշխվում է հավասարաչափ և կանխվում է օդայինպղպջակների առաջացումը: Պատրաստված է չժանգոտվող պողպատից, որն ապահովում է գերէլաստիկություն և փոքրացնում է կոտրվելու հավանականությունը:
5.	Գեյց-գլիդեն N6	Արմատախողովակը ձևավորելու համար: Երկարությունը՝ 28մմ, 32մմ, 38մմ: Տուփը պարունակում է 6 հատ արմատայինշաղափ: Պատրաստված է չժանգոտվող պողպատից, որն ապահովում է գործիքի համաչափամրություն: Կլորացված ծայրը բացառում է արմատանցքի պերֆորացիան: Հորիզոնական ուղղությամբ չափից ավելի ճնշման դեպքում շաղափը կոտրվում է ամենավերևի՝ առանցքին մոտմասից:
6.	Լարգո N6	Արմատախողովակը ձևավորելու համար: Երկարությունը՝ 28մմ, 32մմ, 38մմ:
7.	Արտիկուլացիոն թուղթ	Երկ մակերեսանի, 40միկրոն N10
8.	Թղթե գամիկներ	Թղթե շտիֆտ 200 հատ:
9.	Գուտապերչե գամիկներ	Գուտ. շտիֆտ 04 և 06 կոնայնությամբ, 60 հատ: N15,N20,N25,N30
10.	Պլոմբանյութ լուսակարծրացող XRV HERCULITE 78gr KERR	Հիբրիդայինպլոմբանյութ - 78 գր. տարայով, պարունակում է 16 ներարկիչ դենտինային 5գր A2, B1, C2, D2, էմալային 5գր A1, A2, A3, A3,5, B1, B3, C2, C3, D2, D3 և կտրիչային 2,5գր մեդիում, լայթ պլոմբա, օրթոֆոսֆորական թթու 3գր, ապլիկատորներ 50 հատ, քոնդ 5 մլ. Պլոմբանյութը 76 տոկոսով (57 տոկոս) ծավալով բաղկացած է ոչօրգանական բարիումական լցիչից 0.6 միկրոն մասնիկների չափով
11.	Պլոմբանյութ քիմիական կարծրացման	Խարիզմա ՊՊՖ - 2x12 գր, ֆտոր արտազատող, գույնը A3, լցիչը 65 տոկոս, որից 46 տոկոսը ոչ օրգանական լցիչ (բարիումական-ալումինիումական-ֆտորիումական սիլիկատայինապակի) շաղախման ժամանակը՝ 45 վայրկյան, մշակման ժամանակը շաղախման ավարտից՝ 120 վայրկյան, պոլիմերիզացման ժամանակը շաղախման ավարտից՝ 300 վայրկյան.
12.	Քիմիական կարծրացման ցեմենտ	Ֆուջի 1 - 35g փոշի 25gr հեղուկ, ռենտգենկոնտրաստայինապակեիոնոմերայինֆիքսող ցեմենտ, գույնը բաց դեղին, արտազատում է ֆտոր, ֆիքսացիոն ուժը 4 մթնոլորտ, շաղախման ժամանակը՝ 20 վայրկյան, աշխատանքայինժամանակը՝ 2 րոպե.
13.	Մատրիցա	Էկվատորայինմատրիցաներ 30հատ, հաստությունը 0,038մմ և 0,05մմ հաստությամբ
14.	Արմատալիցք	Կոմպլեկտ՝ փոշի-endofill-15gr, բաղադրությունը՝ դեքսամեթազոնի ացետատ, հիդրոկորտիզոնի ացետատ, պոլիօքսիմեթիլեն, թիմոլի յոդիդ հեղուկ-15ml, էվգենոլ
15.	Պլոմբը փայլեցնող մածուկ N200	2գ. Փաթեթավորմամբ, միամնգամյա օգտագործման մածուկներ, պլոմբանյութի մաքրման և փայլեցման համար N200

Պիտանելիության ժամկետ նեցող ապրանքների դեպքում՝ ապրանքատեսակները հանձնման պահին պետք է ունենան առնվազն պիտանելիության ժամկետի 1/2-ը:
Մատակարարման ժամանակ անհրաժեշտ է ներկայացնել.
1. Արտադրողի միջազգային հավաստագրի /ISO, GMP, EC կամ այլ/ և /կամ/ արտադրող պետության կողմից տրված արտադրության անվտանգության և որակի վերահսկման հավաստագրի պատճեն
2. Արտադրող կազմակերպության (կամ արտադրողի պաշտոնական ներկայացուցչի)՝ կողմից տրվող ապրանքի /ապրանքատեսակների խմբաքանակի/ համապատասխանության և (կամ) որակի հավաստագիրը
Ապրանքները պետք է մատակարարվեն ՀՀ ՊՆ 73014 զորամաս (ք. Աբովյան):

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ դեպարտամենտի/պետի ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«ԷՍՁԵԹՖԱՐՄԱ» ՍՊԸ տնօրեն

Ե. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 2
N ՇՀԱՊՁԲ-9/25-2 պայմանագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Գնման առարկայի անվանումը	Չ/Մ	Քանակ	Միավորի գին/դրամ/	Ընդհանուր գումար/դրամ/	Գնման ժամանակացույց
1.	Տուրբինային գլխիրներ	հատ	6,001	236	1,416,236	2016թ. դեկտեմբեր, բայցոչ ուշ, քան 10.12.2016
2.	Ատամնաբուժական ասեղներ 100 հատ (Յուրաքանչյուրից)	տուփ	300	1,820	546,000	
3.	Ֆայլեր K-files, H-files (Յուրաքանչյուրից) N6	տուփ	2,024	845	1,710,280	
4.	Արմատալեցիչ N4	տուփ	450	1,270	571,500	
5.	Գելց-գլիդեն N6	տուփ	399	2,480	989,520	
6.	Լարգո N6	տուփ	349	2,480	865,520	
7.	Արտիկուլացիոն թուղթ	տուփ	800	2,440	1,952,000	
8.	Թղթե գամիկներ	տուփ	3,000	760	2,280,000	
9.	Գուտապերչե գամիկներ	տուփ	1,500	935	1,402,500	
10.	Պլոմբանյութ լուսակարծրացող XRV HERCULITE 78gr KERR	տուփ	50	190,000	9,500,000	
11.	Պլոմբանյութ քիմիական կարծրացման	տուփ	100	9,900	990,000	
12.	Քիմիական կարծրացման ցեմենտ	տուփ	50	33,950	1,697,500	
13.	Մատրիցա	տուփ	200	1,680	336,000	
14.	Արմատալիցք	տուփ	80	13,200	1,056,000	
15.	Պլոմբը փայլեցնող մածուկ N200	տուփ	50	24,000	1,200,000	
					26,513,056	

Հավելված N 3
N ՇՀԱՊՁԲ-9/25-2 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Ապրանքի անվանում	Ընդհանուր գումար/դրամ/	CPV կոդեր	Նախատեսվում է ֆինանսավորել 2016թ., այդ թվում՝ Դեկտեմբեր
1.	Տուրբինային գլխիրներ	1,416,236	33141193/50/4/2	1,416,236
2.	Ատամնաբուժական ասեղներ 100 հատ (Յուրաքանչյուրից)	546,000	33141193/16/4/5	546,000
3.	Ֆայլեր K-files, H-files (Յուրաքանչյուրից) N6	1,710,280	33141193/25/4/5	1,710,280
4.	Արմատալեցիչ N4	571,500	33141193/36/4/5	571,500
5.	Գելց-գլիդեն N6	989,520	33141193/47/4/5	989,520
6.	Լարգո N6	865,520	33141193/53/4/5	865,520
7.	Արտիկուլացիոն թուղթ	1,952,000	33141193/54/4/5	1,952,000
8.	Թղթե գամիկներ	2,280,000	33141193/55/4/5	2,280,000
9.	Գուտապերչե գամիկներ	1,402,500	33141193/56/4/5	1,402,500
10.	Պլոմբանյութ լուսակարծրացող XRV HERCULITE 78gr KERR	9,500,000	33141194/7/4/5	9,500,000
11.	Պլոմբանյութ քիմիական կարծրացման	990,000	33141194/6/4/5	990,000
12.	Քիմիական կարծրացման ցեմենտ	1,697,500	33141194/9/4/5	1,697,500
13.	Մատրիցա	336,000	33141193/57/4/5	336,000
14.	Արմատալիցք	1,056,000	33141194/8/4/5	1,056,000
15.	Պլոմբը փայլեցնող մածուկ N200	1,200,000	33141193/20/4/5	1,200,000

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ դեպարտամենտի պետի պաշտ.

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«ԷՍԶԵԹՖԱՐՄԱ» ՍՊԸ տնօրեն

Ե. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 4
N ՇՀԱՊՁԲ-9/25-2 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
_____	_____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆԱՄԱՆ-ԸՆԴՈՒՆԱՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս
_____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս _____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ մատակարարումների վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 4.1
N ՇՀԱՊՁԲ-9/25-2 պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի պայմանները Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Գնորդ)
(Գնորդի անունը)
----------ի (այսուհետ՝Վաճառող) միջև 20 թ. -------ին կնքված N ----------
(Վաճառողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն